ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ (ՄԿԾ) ՄԱՍՆԱԳԻՐ

ՄԿԾ-ի անվանումը և մասնագիտության դասիչը	Մաթեմատիկա -056101.00.6
ՈԱՇ-ի մակարդակ	Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ (բակալավր)
Որակավորման աստիճան	Մաթեմատիկայի բակալավր
Բուհը	Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան
Արտոնագրում	Արտոնագրված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից (Լիցենզիա № 0025, հաստատված 06.04.16թ. նախարարի հրամանով), մասնագիտության ծածկագիրն է՝056101.00.6:
Ֆակուլտետը	Բնական գիտությունների ֆակուլտետ
Ուսուցման լեզուն	Հայերեն
Ուսուցման ձևը	Առկա
Ուսուցման տևողությունը	«Մաթեմատիկա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի նորմատիվային ժամկետը ուսուցման առկա ձևում չորս տարի է, ընդհանուր ուսումնական բեռնվածությունը 240 կրեդիտ է՝ տարեկան 60 կրեդիտ (1 կրեդիտը՝ 30 ժամ):
ՄԿԾ-ի մուտքի պայմանները	Ընդունելությունը բակալավրի ՄԿԾ-ով իրականացվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) *(վերնագիրը խմբ. 01.04.21 n 469-ն, 07.04.22 n 476-ն)* » կարգի:
ՄԿԾ-ի նպատակը	ՄԿԾ-ի նպատակն է մաթեմատիկոսի պատրաստումը, ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային գիտաուսումնական, հետազոտական կենտրոններում, արդյունաբերական կազմակերպություններում, մաթեմատիկայի հիմնարար և կիրառական խնդիրների ոլորտում աշխատելու համար:
ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքները	ՄԿԾ-ի ավարտին բակալավրիատի ուսանողը պետք է. **Գիտենա** ✓ մաթեմատիկայի ֆունդամենտալ բաժինների հիմնական հասկացությունները, սկզբունքները և թեորեմները, ✓ կիրառական մաթեմատիկայի հիմնական սկզբունքները, մեթոդները, ✓ արդի ծրագրավորման լեզուները: **Կարողանա** ✓ լուծել խնդիրներ, որոնք համապատասխանում են իր մասնագիտացմանը գիտական և կիրառական հետազոտություններում: **Տիրապետի** ✓ բնական գիտությունների տարբեր բաժինների խնդիրների լուծման թվային և օպտիմիզացիայի մեթոդներին, ✓ մաթեմատիկական արդի ծրագրային փաթեթների կիրառման հիմունքներին:

ՄԿԾ-ի յուրացման արդյունքում ձեռք բերվող կոմպետենցիաներ (առաջնորդվել ՎՊՀ «Առարկայական նկարագրի մշակման ռազմավարություն» փաստաթղթով)	«Մաթեմատիկա» մասնագիտության բակալավրի որակավորում ստացած շրջանավարտը ձեռք կբերի. **Ընդհանրական կոմպետենցիաներ (այսուհետև ԸԿ)** ✓ մայրենի լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցման հմտություններ (ԸԿ 1), ✓ գործնական մակարդակով երկու օտար լեզվի իմացություն (ԸԿ 2), ✓ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հմտություններ մասնագիտական ոլորտում (ԸԿ 3), ✓ տեղեկատվական տարբեր աղբյուրներ գտնելու, վերլուծելու և ընդհանրացնելու կարողություն (ԸԿ 4), ✓ ծագած հիմնախնդիրների քննարկման, գնահատման և դրանց լուծման կարողություն (ԸԿ 5), ✓ անհատական և թիմային աշխատանքի կարողություն (ԸԿ 6), ✓ գիտելիքները գործնականում կիրառելու, խնդիրներ ձևակերպելու և լուծելու կարողություն (ԸԿ 7), ✓ ժամանակի և այլ ռեսուրսների արդյունավետ պլանավորման կարողություն (ԸԿ 8): **Մասնագիտական կոմպետենցիաներ (այսուհետև ՄԿ)** ✓ ունենա հիմնարար գիտելիքներ մաթեմատիկայից և կարողանա կիրառել տարբեր առարկայական ոլորտներում **(Մ1)**, ✓ ցուցաբերի մաթեմատիկայի տեսական, գործնական և կիրառական ասպեկտների և դրանց միջև կապերի իմացությունը և կարողանա դրանք մեկնաբանել և հիմնավորել **(Մ2)**, ✓ ունակ լինի ճշգրիտ և պարզ կերպով ներկայացնելու մաթեմատիկական դրույթները և դրանց հիմնավորումները, հիմնախնդիրները և դրանց լուծումները, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր**(Մ3),** ✓ կարողանա տարբերա առարկայական ոլորտների համար կառուցել մաթեմատիկական մոդելներ և լուծել այդ խնդիրները թվային և օպտիմիզացիայի մեթոդների կիրառմամբ **(Մ4)**, ✓ տիրապետի ծրագրավորման արդի լեզուների, մաթեմատիկական արդի ծրագրային փաթեթների և ունակ լինի օգտագործելու դրանք տարաբնույթ խնդիրների լուծման համար**(Մ5)**:
Ուսուցման և դասավանդման մոտեցումները	Ուսուցման իրականացման հիմնական ձևերն են. ✓ դասախոսություններ (այդ թվում՝ էլեկտրոնային կրթական հարթակների միջոցով), ✓ գործնական պարապմունքներ, սեմինարներ (այդ թվում՝ էլեկտրոնային կրթական հարթակների միջոցով), ✓ ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, նախագիծ և այլն), ✓ կուրսային աշխատանք, ավարտական աշխատանք, ✓ արտադրական պրակտիկաներ:
Գիտելիքների գնահատման	Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ:

մեթոդները	Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատումը կատարվում է ըստ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման» կանոնակարգի:
Մասնագիտական գործունեության ոլորտները.	«Մաթեմատիկա» մասնագիտությամբ բակալավրը բուհն ավարտելուց հետո կարող է աշխատել. ✓ բուհերում, քոլեջներում, ✓ գիտահետազոտական ինստիտուտներում, ✓ տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերություններում: Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել նաև այնպիսի ոլորտներում, որտեղ հնարավոր է ձեռք բերած կոմպետենցիաների կիրառումը (օրինակ՝ տարբեր գործընթացների մոդելավորման համար, ռիսկերի գնահատման համար, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության համար):
Հետագա ուսման հնարավորություն-ները	«Մաթեմատիկա» մասնագիտությամբ ՄԿԾ-ն յուրացրած բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու ✓ մագիստրատուրայում՝ ստանալու մագիստրոսի որակավորման աստիճան: